

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Բ.— Ի ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴՆ ՓՐԿՁԻՆ

Ծնունդ կուսին կատարեալ մարդ, և մայրն կատարեալ, նախ քան ըղ-
ծնունդն կատարեալ, և ի ծնանելն կոյս, և յետ ծննդեանն կոյս: Եւ որպէս օ-
տար առաջնորդութեամբ ճանապարհորդեցաք, աւտարքս պաշտելով զօտար
Աստուած, օտարացոյց զմեզ ի պաշտելութենէ: Աւտար աստուծով մերով ծան-
եաք զԱստուած ճշմարիտ: Այնպէս տեսաք իրա օտարս և սքանչելի, Հասանել
խորհրդոց այսմ օտար ոչ կարացաք, և միայն փառաւորելով ասացաք. փառք
ի բարձունս Աստուծոյ, որ կամեցաւ զործել այդպիսի խորհուրդ, օտար և ըս-
քանչելի, յերկրի՝ որ զխաղաղութեան շնորհք պարգեւեաց:

Յ Ո Ր Դ Ո Ր Ա Վ

Եկայք և մեք քրիստոսասէր սիրելիք, ի տօնս Քրիստոսի Որդւոյն Աս-
տուծոյ վայելեացուք, և ի միտ առցուք զձայնն դայն ասելով. Բնակեցայ ի նո-
սա և շրջեցայ ընդ նոսա, և դայն որ ասէ դուք էք տաճար Աստուծոյ և զիմա-
մարտեացուք և մեք ընդ աստուածամարտ Հրէայն, և խցցուք զրեւանս նոցա,
և ուրախացուք ընդ անբաւ և ընդ անվատնելի բարութիւնս մեր, և զմարմնաց-
եալ բանն Աստուած մեծապէս փառաւորեացուք, և մարմնացելոյն ընդդէմ իրբի
Աստուծոյ՝ ընդ աստղն ընթացուք, ընդ մոզուցն երկրպագեացուք, ընդ հո-
վիւն բարերանեացուք, ընդ երկնայինն օրհնարանեացուք, և ասացուք՝
փառք ի բարձունս Աստուծոյ, զի արարօղն երկնից և երկրի, Հաճեցաւ յարա-
բաժոց ձեռաց իւրոց մարդ լինել, զի երկրի խաղաղութիւն շնորհէ ի մարդիկ
ընակել, և ազատել ի դառնութենէ անիծիցն Ադամայ:

Աւրհնեացուք զնա, որ առաքեաց զորդին իւր միաժին վասն մեր անար-
ժանիցս, և առաքեալն Հարթ և Հաւասար առաքողին, բարերանեացուք զբարե-
ղործն, զի որպէս ի ձեռն կնոջն ամաւ ծառայութիւն և մահ և պատերազմ յաշ-
խարհս, նոյնպէս և ի ձեռն կնոջ պարգեւեցաւ ազատութիւն կենդանութեան, և
խաղաղութիւն աշխարհիս, որ վասն մեր մեղաւորացս խոնարհեցաւ, զի բարձ-
րացուցէ զխոնարհս յազրեաց, փառաբանեացուք զնա՝ որ փառաւորեաց զգոր-
ծրս ձեռաց իւրոց, ի մէջ հրեշտակաց իւրոց. զոհացուք զնմանէ զի փարատեա-
ցուք ի տանջանաց զժողոց վասն մեծի փառաց նորա, և ընդ օրհնելն զնա և ա-
սել, օրհնեալ է Աստուած, Տէր Թաղաւոր երկնաւոր, Աստուած Հայր ամենա-
կալ, որ այնքան սիրեաց զմեզ մինչև և ետ զորդին իւր միաժին զՅիսուս Քրիս-
տոս վասն մեր:

Աւրհնեացուք զՀոգին Սուրբ էակից Հօր, որ եղև հովանի ի վերայ ա-
րարածոց իւրոց:

Աւրհնեալ Տէր Աստուած դառնն Աստուծոյ որդի Հօր, դառն Աստու-
ծոյ ընդ մարմնոյն խոնարհութեան, և որդի Հօր, որ ծնեալ նախ քան զյաւիտե-
անս ի Հօրէ առանց մօր, որ երարձ զմեզս աշխարհի, այսինքն է զԱդամայն,
և ոգորմեցաւ. և զու նոյն ինքն բարձեր զմեզս ամենեցուն մեր, և ընկալ զա-
ղաչանս մեր, որ նստիս ընդ աջմէ Հօր, և եղեր ողորմած ի վերայ ամենեցուն,
որ ես միայն Սուրբ, դու միայն Տէր Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր
ամէն:

Աւրհնեալ է Աստուած՝ և զօրհանապազ օրհնեցուք զնա, և բարերա-
նեցուք զանուն նորա սուրբ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից, որ արժանի
արար զմեզ պահել առանց մեղաց, որպէս և արժանի արարեր զմեզ առնուլ բղ-
կերպարանս մեր և արարեր զմեզ արժանի հաղորդել յանարատ մարմնոյ և յա-
րենէ քրտմէ :

Աւրհնեալ է Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ ա-
նուն քո յաւիտեան :

Աւրհնեալ է Տէր, որ ուսոյց մեզ զարդարութիւն և հաստատեալ է ի
մեզ զճշմարտութիւն իւր, և լուսաւորեալ զմեզ առաւելապէս լուսովն իւրով :

Աւրհնեալ է Աստուած, որ եղև մեզ ապաւէն ազգէ յազգ, և ի նա յու-
սացաք, զի ողորմեացի մեզ, և բժշկեցէ զանձինս մեր ի յանցանաց մերոց, և
յապականութենէ ախտից, քանզի յոյժ մեղաք և նա զբթացաւ ի մեզ, և մեք ա-
պաստան եղաք ի նա, և նա՝ մարդասիրապէս խնայելով զմեզ ուսուցանէ զմեզ
առնուլ զկամս իւր, զի նա է Աստուած մեր և ի նմանէ բղխեցէ մեզ ազրիւր
կենդանութեան, որ սրբեցէ զմեզ յաղտեղութենէ և մաքրագոյն զործեցէ լի-
նել օթեանս Հոգւոյն Սրբոյ :

Աւրհնեալ Տէր Աստուած լոյս անմատոյց, զի լուսով նորա տեսցուք բղ-
լոյսն աներկոյ, և ծագեցաւ արեղակն ի բարձանց՝ լուսաւորելով զնստեալքն ի
խաւարի և ի ստուերս մահու : Եւ մեզ այսօր ուրախացելոցս, որք ճանաչեցաք
զնա, առաւելապէս ողորմութիւն նորա ծագեցաւ առ մեզ, և ոչ եթէ շնչաւոր
դոյացեալքս և երկրաւորքս, այլ և անշունչ տարերքն և երկնաւորքն, ճանաչե-
ցին զնա, և սպասաւորեցին նմա այսօր, երկինք աստեղքն, աստղն մոզօզն,
մոզքն ընծայեալքն, երկիր այրիւն, անապատն Մարմին, նիւթք խոնձարրան,
Յովսէփ սպասաւորութեամբն, մեք Մարիամաւ՝ մարրն իւրով, հրեշտակք
զօր(հն)ութիւնք երկնաւորաց՝ օրհնութեամբն, Հովիւքն սրանչելեօքն, զոր լը-
ւան ի զօրաց երկնաւորաց ասել՝ փառք ի բարձունս Աստուծոյ՝ յերկիր խաղա-
ղութիւն, ի մարդիկ հաշտութիւն. զի վերացաւ յերկրէ սուղ և տրտմութիւն,
ջախջախեցաւ դուրս վիշապին, որ մահարեր թունիւք իւրովք ամ զմահ յաշ-
խարհս :

Այսօր լուացաւ թոյնքն մահարեր երգարանին, հրապուրող պատերազ-
մօղ թշնամւոյն, և շլացաւ մահարեր խայթոցք նորա, վերացաւ ճենճերք զո-
հիցն, զի ընդ պատարագս և ընդ զոհս ոչ հաճեցաւ, փասն այնորիկ մարմին
հաստատեաց այսօր ինքնէ, զոր այսօր զգենուլ հաճեցաւ, որով շինեալ բազինք
բաղմաստուածոցն կործանեցան, և հիմնեցաւ կաթողիկէ առաքելական եկեղե-
ցի, և քարոզեցաւ մի աստուածութիւն, երեք անձնաւորութիւն, երեքսրբեան
և մի իշխանութիւն, տէրութիւն, որ բաժանի անբաժանաբար և միաւորի որոշ-
մամբ, և միաւորութիւնն ոչ ճանաչէ զխառնակութիւն :

Եւ բաժանմամբն՝ միաւորութեամբ փառաբանի և երկրպաղի, որ Հօր
հաճութեամբ Որդի մարմնանալ հաճեցաւ, Հոգին Սուրբ եկեալ և զօրութիւն
բարձրելոյն եղեալ Հովանի, և բանն մարմին եղեալ և բնակեաց ի մեզ : Նմա եր-
կրպաղեցուք և փառաւորեցուք, զի նմա վայելեն փառք, պատիւ և երկրպա-
ղութիւն, հանդերձ Հարբ բարերարաւ, և Հոգւոյն Սրբոյ՝ կենդանաբարի և
փառակցի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն :

Գ.— Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԵՒ
Ի Ս. ԵՒ Ի ԼՈՒՍԱՌՈՐ ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆ(*)

Երանելոյն Թէոփիլեայ, ասացեալ ի Յայտնութիւն Տեառն
և ի Սուրբ և ի լուսաւոր Մկրտութիւնն:

Պայծառացեալ տօնին երէկի, պայծառապէս լուսաւորեցաք, ով տօ-
նաւորք փառաւոր տօնից, և դարձեալ զուարճացաք այսօր լուսովն անմատոյց,
որ ծաղկեալ մեզ ի ջուրսն Յորդանանու, և լուսաւորեալքս քրիստոսեան մկր-
տութեամբ, փառաւորեցաք յոյժ, վասն զի զոր երէկ Բեթղաւէմ եցոյց յայրին՝
զորդին Աստուծոյ ի կնիչն որդի մարդոյ լիեալ, այսօր Նեփթաղիմ ցուցանէ
զորդիս մարդկան բարձրագոյն փառօք ի Յորդանանէ՝ որդիս Աստուծոյ լիեալ:
Եւայ ախորժելով Հեշտացոյց զունի, և լսելով խրատուն սատանայի, եկեր ի
պտղոյն որոյ յուտեն ունէր զցանկութիւն Աստուած լինելոյն և Աստուած
(դ)ձնանկոյն, որոյ զկնի աշնմ յղացաւ տրամութեամբ, և ծնաւ ցաւով, աճ-
եաց անէժն սպանմամբն, ծաղկեաց փշարերութիւնն մեղօքն, մուծաւ ի յան-
ցանաց անտի և մահն յաշխարհ, որով սփռեալ առհասարակ տարածեցաւ սուղն:

Եւ արձակէր մարդկութեանս ազգ վտակս արտասուաց, մինչև կամաւ
Հօր և Հաճութեամբ Հոգւոյն, զուստր նորա Սրբուհին Մարիամ յղացաւ ի Հոգ-
ւոյն Սրբոյ, (յ)աւետեալ Հրեշտակապետէն ընդ ականջն, և որում մայր նորա
ցանկացաւ և ոչ եհաս, ինքն արժանաւորեցաւ մայր լինել Աստուծոյ, և յինքն
ամփոփելով զԱստուածութեանն Հօր՝ ծնաւ զուրախութիւն աշխարհի, որ կի-
զելով անյայտ արար զծաղիկս անօրէնութեան փրչոց, բուսաւ յանհրաժ ան-
դաստանի բոյսն երկաջով, և անդուստ յայտ եկեալ արդիւնացաւ մեղ Հատ մի
պարարտ, որում աշխարհ ամենայն ոչ բաւէ լինել կալ առ ի տանել զհացն յերկ-
նուստ, որ կեանս է կերողացն, և զամենայն Հաւատացեալքս կերակրելով Հատն
այն ոչ Հատանիցի:

Եւայ, յանդէպ ժամու ձգելով ի փայտն զձեռսն, կթեաց զապականու-
թիւն, և ընկալաւ ճաշակմամբն՝ փոխանակ լուսոյն շնորհաց՝ ըզգաղիրն մեր-
կութիւն, որ ածեալ Հասանէր զմեզ՝ քրտամ[ր]ք երեսաց ուտել զհացս: Իսկ
զուստր նորին, ի մէջ փշարերութեան օրինացն, յամլացեալ որովայնէ, փոխա-
նակ պտղով մեղ որթ ծաղկեցաւ, որոյ բարունակն Հասանօղ յերկին, և ի մէջ
Հրէիցն, որք սառուցեալ էին անհաւատութեան ձմերամբ՝ բարձեալ ունէր ող-
կոյղ մի Հասուն, որոյ Հնձան պատրաստեցաւ փայտն զիտութեան և ծառն անի-
ծից, և տէղ նիզակին բաշխօղ արեանն, ի կողէ կենաց պտղոյ փոխանակ ժամ-
ոց, Հոսելով առանց ճմլելոյ, ազգի մարդկան զգինին ուրախութեան, յորմէ
արբեալքն և զմայելալքն զմահ մի տեսցեն յաւիտեան:

Եւայ յետ յանցանացն և անիծիցն ծննդեանն երկրորդ ծնունդ զՀարէլ
ծնաւ, զմատուցիչն Աստուծոյ պատարագ ընդունելի, և անդէն՝ որ զործել ետ
Հօրն զառաջին յանցանսն՝ արկանէր ի խորհուրդս Կայենի զչարութեան մա-
խանսն, որով սպանանել ետ զմատուցիչն Աստուծոյ զառանցն անարատ՝ և զը-
նել որպէս զառն պատարագ ընդունելի: Եւ զուստր նորին օրինորդ Կոյսն Սր-
բա Մարիամ, ծնաւ անմեղութեամբ զորդին Աստուծոյ՝ զգառնն անարատ, և շնե-
լով զառնն պատարագ ընդունելի, զբարձօղն անիծից, որ ընդունօղն էր պա-
տարագացն Հարելի, յորոյ վերայ յօրինաց անտի յարեաւ նախանձ չար, առ ի
սպանանել զգառնն Աստուծոյ, (ով) [որ?] արեամբն քուիչ է աշխարհի:

Որոյ զաւուրս ամացն երեսնից անմեղութեան և Հեղութեան վարելով

(*) Ձեռ. Ս. Յ. Թ. 154Ա (էջ ՃՀԳ-ՃՁԳ) = Բ

չաւօղ, զոր վասն ինքեան գառաջնոցն խօսս, և զգրեալուն ի գլուխ հան ելից, և այնպէս ի Գալիլէոյ Հեթանոսաց կատարմանցն ամաց երեսնից, ընդ այլ ժողովուրդսն ի մկրտութիւն զայ ի նոյնում աւուր, յորում ծնաւ ի կուսէն, ակնարկելով յառաջնթացն և զինուորն՝ ետես ի գալն ի Հեռաստանէ անապատացին՝ զերկնաւոր թագաւորն, երկրաւոր Հրեշտակն, զերկնաւորաց զոյացոցանօղն, մար[ա]խակեր մարգարէն, զհացն երկնային, ամլածին Հօտապետն, ըզգառնն կուսածին, մեծազոյն մարգարէն՝ զլրումն մարգարէիցն, որդին մարգարէի՝ զչնորհօղն մարգարէութեան, ծնեալն ի ծերացեալ հօրէ՝ զյառաջ քան զարուսեակ ծնեալ անսկզբնութեամբ՝ յանձերանալին Հօրէ, պատրաստողն ճանապարհին Տեառն, զՏէրն և զԱստուածն զալով ի Յորդանան, Հանդերձօղն շաւղացն, զիջեալն անդիտելի ճանապարհաւ յերկիր, արուսեակն (զ)արեղականն ճրագն վախճանաւոր, զաննուաղ յոյսն, արարածն՝ զարարօղն, ստեղծուածն զստեղծօղն, անօթն՝ զբրուտն, ապականացու, զանապականն, մահկանացուն, զանմահն, որդի ամլոյն Եղիսարեթի, զորդին Աստուծոյ զծնունդն Մարիամ Կուսի:

Յուցանէր մատամբն զբաջ փրկօղն և զհովիւն Երկնաւոր՝ Հօտիցն երկնաւորաց, և ասէ՝ ահաւասիկ Քրիստոս զառնն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի: Գառնն սոսաց քնա, զորոյ օրինակն Աբրահամ ի բարձուէ ոչխար տեսեալ, և Եսայի որոջ և ոչխար ասացեալ, զորոյ օրն ցանկութիւն ունէր տեսանել Աբրահամ, և ի տեսնելն՝ ուրախ եղև, որոյ արիւնն՝ արիւն փրկեալ, և զկնի այժմ անարատ և արատաւոր զառնն՝ արիւն յաստուածաբան Հարուածոց ըզՅակոբեան տօշմն ապրեցուցեալ, և ի փառասունեան ծառայութենէ, զհարսն ազատ արարեալ: Այլ ճշմարիտ զառնն Աստուծոյ աս է, որ զնելով յանրանից մրսուր, երկիր եղև խաղաղութիւն, որ և Հովուացն Հրեշտակն ծայնէին, և այժմ զայ ի Յորդանան խոնարհութեամբ, և որպէս զառնն հեղական զնացիւք և մարդկաբար զիջմամբ ի Հօրէ անհայր որդին:

Ահա որդին Յովսեփայ, զոր զեքն խոստովանէին որդի Աստուծոյ, որոյ զալովս Յորդանան՝ սասանի ահա վերինք և ներքինք որոյ երկինք աթոռ են, ի հեռիտոս անկեալ ճանապարհաւ զայր: Յորոյ զէմս ոչ կարէր նկատել Միքայէլ, քան զՅովհաննէս նուաստ երեւէր, յորմէ ի տեսանելն սարսափէր Գաբրիէլ, որ զՊաքարիայն ինքեան խոնարհ կերպարանիւր, և զայնոսիկ տեսանելով արարածոց վերնոց, և եղևոց ստորնայնոց: Յուդայի՝ Չարօղոն ծայնէր, Բեթղահէմի՝ Նեփթաղիմ, անապատն՝ ի Յորդանան և առ հասարակ զծիշ բարձեալ իրերաց ծանուցանէին:

Ահա արարօղն մեր՝ յիւրքս զայ յարարածս, որոյ երկինք արարալծ է ձեռաց նորա, ահա զեանն Աստուծոյ զայ ընդ անապատն, որ է աղբիւր կենաց, զի ըզխեսցէ ի Յորդանան, և հուր վառեալ այրեսցէ ի մէջ ջրոյն զսերմանօղն փշոց, զոր տեսանելով Յովհաննու զալով ի Յորդանան, որոյ հայրն զաշաշտեալ նորա տեսեալ երկիւղիւ ըմբռնեցաւ, այլ անդ՝ առ մարգարէն, և ծառայն ծառայակից, իսկ առ որդի նորա՝ արարօղն Հրեշտակաց և մարդկան, և անդ՝ զդոդման հարեալ, երկնէր ի ստեղծողէն՝ ասելով. Գիտեմ հաւաստի՝ թէ ո՞ր ես, կամ ուստի՞, կամ յի՞նչ եկիր: Զի թէ յառաջագոյն յարգանդին զուրով, ծանեալ զքեզ յորովայն կուսին, արարօղ մարդկան, այժմ զիա՞րդ ոչ ճանաչեցից՝ որ յայտ յանդիման տեսանեմ զսահմանս մարգարէիցն, զլրումն մարգարէութեան նոցին, և որոյ չկարացի հանդուրժել ծածկեալս յորովայնի ամլոյն, լուել բոտ սովորութեան սողմն առելոց, խայտալովն՝ փոխանակ ծայնի առաջիքս, զերկրպագութիւն նշանակեցի: Արդ՝ զիա՞րդ զօրեցից կալ ի սպասաւորութիւն առաջիքս, որ հասեալս եմ ի ախ հասակի, ի մկրտելն իմ զփողովուրդս

ական ունէի ի քէն մկրտել, փասն որոյ և ժողովրդեանս ասէի թէ՝ ոչ եմ արժանի լուծանել զխրատցս կօշկ(ե)աց նորա: Արդ՝ զոր այդպէս խոստովանեցայ առաջի ժողովրդեանս, զիս՝ րդ զօրեցից մկրտութեան քո սպասաւորել, և զիտեմ զի կատարելովն իմ զոր ինչ՝ հրամայես ծառայիս քում՝ փառաւորեացի անուն իմ, բարձրացի եղջիւր իմ, երանեացի աջ իմ, այլ զդերիվերայն քան զիմս զօրութիւն ոչ զօրեցից զօրծել:

Եւ ընդէ՞ր խնդրես ի մարդոյ պայդ՝ արարողդ մարդկան, որոյ կարօտի բնութիւն մարդկան ի քէն խնդրելոյ: Եւ զիս՝ րդ ձեռն ախտաւորի հպեացի յառանց ախտի սաղմն առեալդ և ծնեալդ, յղացեալս յանցանօք, յոր զանօրէնութիւնս և զմեղս բառնայցես: Ահա՝ երկինք երկնաւորօք, և երկիր՝ երկրաւորօք զիտեն, և ի տեսանէն ամենեքեան ըզհամարձակութիւնս իմ անդոնեացեն, ոչ համարձակեցայ մերձենալ ձեռամբ, յորմէ զուարթունք երկնից ի տեսանէն զողան և սարսեն: Գիտեմ ասէ զխորհուրդ սրտի քոյ, որ քննէ զսիրտս և զերկամօնս, այլ նախ ինձ պարտ է ընուլ զօրէնս հրամանին իմ յոր զքեզ առաքեցից, զի թէ զասացեալսն ի մարդարէից իմոց ի զլուսի հաճելով յցի, զիմն հրաման և բան անտես զիս՝ րդ արարից. և այժմ թոյլ տուր զոր ես ընուլ յանձն տուի, ի սպասաւորելն զու մի երկնչիր:

Այդպեանն քո և մայրն իմ տացէ քեզ համարձակութիւն, որ յամուլ արդանդէ որպէս զքեզ ծընեալ: Եւ արդ որպէս հաճեցայ, զի որովայն ամբողջոյն կուսի կուսութեամբ տարաւ զիս ժամանակաւն ինն ամսեան, որով երանեցաւ և մեծն կոչեցաւ աստուածածնութեամբ քան զամենայն կանայս:

Կամ իմ այժմ զի մկրտելով ի քէն, ձեռն ամբողջոյ կուսի մերձեացի ի զլուսի իմ, որով անուն քո քան զամենայն ծըննդոյ կանանց մեծ հռչակեացի, ոչ խնդրեմ ի քէն մկրտութեամբս այսու սրբութիւն, այլ զի այս օրէն է, մկրտութեամբս իմով որով ի հօրէ առից զորդութեանն վկայութիւն:

Ամենայն մկրտելոցն որ յիս, քան զառաջին մարդոյն առաւել տաց լուսաւորութիւն, անուն երանութեան և զգեստ արքայութեան առնելով և ժառանգս վերին աշխարհին, որ հրաշապան փայլէ քան զգրախտին զկեանսն, և զառաջինն բնակութիւն: Գիտեմ ասէ, զի ստուգապէս հանաչես զիս, և որպէս ըզրադումս ոչ տեսանես, զի թէ ամենեքեան, որ տեսին զքեզ էին դաւանել, իրր ծնունդ Յովսեփայ ի Մարիամայ՝ ոչ էին կարծել զիս, և որպէս կարօտ ուտելոյ և ըմպելոյ ի հարսանիսն ոչ էին կոչեալ, որ և թէ զու որպէս զնոսա էիր համարեալ զիս, քան զամենայն ծնունդս կանանց մեծ՝ ոչ էի ցուցեալ ըզքեզ:

Եւ արդ՝ բաւական է ինձ զոր վկայեցեր, չիք պէտս ինձ այլ վկայութեան ի մարդկանէ, քանզի վկայութիւնդ քո ժողովուրդս այս որ աստ են, և բնաւ ազգն քո, ոչ ընդունեցան, թոյլ տուր այժմ զի սոցա ի վերուստ ցուցից վկայութիւն, քանզի վկայութիւնն իմ միշտ անսուտ է, որով ծանուցից դոցա և ամ. աշխարհի, զի իմացին բստուգապէս վկայութեամբն որ յերկնից՝ թէ ո՞վ իցեմ, կամ ո՞ւմ որդի, քանզի խոնարհելս իմ ի մարդանալ սոցա որ տեսանեն, ոչ տայ հանաչել զիս, բայց երանի որ ոչն տեսանեն, և հաւատացեն, ահա ցելեմ գերկինս, իջուցանեմ և զՀոգին Սուրբ, զնա իջուցեալ շնորհեցից հաւատացելոցն յիս, որ հանապազ աստ առ իս է, և ես անդ ի նմանէ ոչ բաժանեցայ, և շրջելովս յերկրի, ի Հօրէ ոչ մեկնեցայ:

Եւ արդ զալով մարդկաբար ի մկրտութիւն, բանամ գերկինս, զի անդուստ ձայն Հօր, և իջուին Հոգւոյն, զկատարեալ մարմին, բնութեամբ Որդի Հօր, և Հոգւոյն համափառ ցուցանիցեմ: Յայսպիսի յերկարելով ի բանս, ոչ զիտէր Յովհաննէս եթէ անդ է թշնամին ճշմարտութեան, և սակա այնր ասացեալ ցնա եթէ թոյլ տուր այժմ:

Եւ արդ ասա եթէ զի՞նչ պատճառաւ չըջէր նա զկնի Քրիստոսի : Լուր աղաչեմ սովորութիւն աշտոյն, զի յորժամ նոր իրաւ եւ զործաւ տեսանիցէ եղեալ՝ չնեւրէ, այլ վաղվաղակի անդ հասանիցէ նա, ըստ չարութեան սովորութեան իւրում : Իբրեւ ետես զՅովհաննէս, զի մկրտելով զառ ինքն զիմեալսն ամ . ապաշխարեալ էր, եւ համարձակութեամբ ձայնէր յամբոյն ասելով . Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ . սա է զոր ինչ լսեմս այժմ, ոչ զիտեմ : Եւ ուսաի՞ ունի սա զհամարձակութիւնս զայս, եւ զառաջին մարդն որ առանց տխտի ստեղծաւ ձեռամբն Աստուծոյ, խրատու մեղացն ի դրախտէ անտի արտաքս ընդեցի, եւ զանախտն ինձ հրնազանդելով, տխտաւոր զործեցի, եւ նա վասն ի՞նչ պատճառի ապաշխարութիւն քարոզէ իմոցն, որքանեաց մեղաց, եւ անբաւ սպանութեանց, եւ հեղմանց արդարոց արեանց, ապաշխարութեամբ քաւութիւն ցուցանէ ժողովրդեանս այսմ, որ զՄովսէս քարկոծ առնէին, զԵսայի սղոցէին, զԵրեմիաս ի տիղմ արկանէին :

Եւ արդ հնար է յետ աշտոնեաց յանցանաց՝ ապաշխարութիւն քաւութիւն զործեցէ, եւ վայ ինձ եթէ քարոզութեամբ նորա յերկրաւորաց ոք թողութեան հասցէ : Եւ յայս միայն ոչ զաղարէ, զինքն եւեթ հակառակ ինձ ցուցանելով, այլ եւ զայլ ոմն մի զալոց սա է զօրութեամբ ահաւոր, այնքան հօրաւորոյն՝ մինչ զի նա, որ այնպիսի ձայնիւ խոսով զիս, ոչ է արժանի յուժանի բոլարացս կօշկաց նորա : Յայսպիսիս հեղձամղձուկ լինելով փութահաս լինէր ի Յորդանան, ուր ի հասանելն այնմ պատահեալ՝ զի առաջի զնալով կարապետն, իջանէին ի Յորդանան, եւ անդէն ի տեսանելն զՅիսուս ջրոցն երկեան, եւ խրատելով ի խորոց անտի չըջան առեալ փախստեամբ յետս զառնային որձանոցն կուտակք :

Առ որ մարդարէին ձայնեալ բան, զի՞ է քեզ ծով, զո՞ տեսեր եւ փախեար, կամ զու Յորդանան, զի՞ զարձար անդրէն . սա է, յերեսաց Տեառն, յերեսաց Աստուծոյ Յակորայ : Եւ ընդէ՞ր ըզգնացս եւ զփախուստ ջրոց գետոյն՝ ծովու սա է մարդարէն : Վասնզի ի դառնայն յետս՝ չըջան առնելով ջուրցն, զծովու առ զնմանութիւն : Եւ ընդէ՞ր արդեօք փախստեամբ ուժգին յետս դառնային : Վասնզի զալովն ընդզէմ ի ներքուստ՝ զԱստուած տեսանէին, զոր եւ մարդարէն կանխաւ դուշակէ, ասելով՝ Տեսին զքեզ ջուրք Աստուած, տեսին զքեզ ջուրք եւ երկեան, եւ խորք խոռովեցան ի քէն, երկիւղելու մեծաւ :

Անդանոր ապա իջանելով ի ջուրսն առ ի մկրտել զնա, եւ յուր սիրելի, գեան հոռէր, ժողովուրդքն չըջան առեալ անբաւ բաղմութեամբ չուրջ պատէին, Յովհաննէս ի հոսանան կացեալ, Յիսուս ի ջուրսն իջեալ, մկրտէր Յովհաննէս, եւ ընդունէր զմկրտութիւնն Քրիստոս : Եւ ահա նոյնժամայն եկեալ ձայն յերկնից ի շօրէ ասելով . Դա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, զմա յուսրուք : Իջանէր եւ շօրին իբրեւ զաղանի եւ զայր ի վերայ նորա :

Արդ սակաւ ինչ եւ համառօտ բանիւ պարտ է ցուցանել յաղապս աղաւնոյն, եւ զայթաղութեան հերձուածողացն, որ ի մարմնաւորութիւն Որդւոյ զի շօրին ոչ բնութեամբ աղաւնի ասաց այլ երեմամբ միայն եւ նմանութեամբ յաղապս տեսողացն տկարութեան : Վասն զի հօգին զօրութեան ոչ զայլոյ իւրք, այլ զշօր(է) եւ զՈրդւոյ ունի բնութեամբ զնմանութիւն, եւ վասն զի որ յառաջագոյն հայհոյէին հերձուածողքն, եւ ցնորեալք եղեն ի մարդեղութիւնն Քի, ոչ խոստովանելով հաւատար շօր, եւ ոչ զԱստուածութիւնն միութեամբ խառնեալ ընդ մարդկութեամբ մարմինս, եւ ոչ զարձեալ երեցն բնութեանց առ իրարս նմանութիւն : Որոց նախ շօրին Սր. հակառակ, եւ այնպէս առաջինքն հարք եւ միջինք, եւ մեք՝ որ յետոյ վերջինք, զի ի մի երեսն, եւ ի մի բնութիւնն, ոչ

ճանաչեցաք երկու որդիք, և ոչ երկու բնութիւն, առ հօր և ընդ հօր, յառաջ քան զմարմնանալն՝ մի որդի և միածին:

Եւ զարձեալ յետ մարմնանալոյն, մի որդի, և նոյնպէս միածին, և ոչ եթէ զի յառաջն մի էր՝ յետ մարդեղութեանն զմիաւորութիւնն իւրովն բնութեամբ միայն ճանաչեցաք, անցանելով և եթ ընդ կոյսն և ոչ ինչ առնելով ի նմանէ. այլ զմի բնութիւնն՝ յերկուց հաստատեցաք: Զի խոնարհելով բնութիւն աստուածութեանն՝ յինքն զբնութիւն մարդկութեանն, և բնութեամբ ըզրոյր բանին ցուցաւ ի կերպ մարդկային մարմնոյս: Վասն զի այնք կամաւ Աստուած մարդ լիեալ, զի առնովն զմերս մարմին՝ Աստուած արտայցէ: Խոնարհութեան կրիքն բանին համարիւր, զի մարդ եղև, և սքանչելացն զործք՝ մարմնոյն, զի Աստուած է. և զյասօր տեսաք, և եկեալ ասէ ձայն յերկնից, եթէ դա՛ ի Որդի իմ սիրելի: Ոմանք ի հրէից անտի ի կարծիս անկանէին եթէ վասն Յովհաննու է ձայնն, մինչև Հոգին նմանութեամբ աղանդոյ ի վերայ Յիւրիջանէր: Որով իմացեալ ստուգիւ, զի ուր Հոգին էջ, բարբառ ձայնին նմա էր: Եւ զի՞նչ բարբառէ, դա՛ ի ասէ, Որդի իմ սիրելի, զմա լուարուք:

Եւ զի՞նչ ասիցէ զի լուիցուք, ես և Հայր իմ մի եմք, և թէ Հայր յիս, և ես ի Հայր, և որ ետես զիս՝ ետես Հայր. և եթէ զամենայն զոր ունի Հայր՝ իմ է, և իմն Հօր, և եթէ որպէս Հայր Աստուած է ճշմարիտ, նոյնպէս և առաքեալն ի նմանէ Յս. Քս., զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ: Լուր դու, շարահարկ Արիօս, և առաջին զտակդ ամպարչտութեան, վասն զի Հայր ձայնին որ ասէ՝ դայ է Որդի իմ սիրելի, յամօթ արարեալ ամաչեցոյց զքեզ, վասն զի Որդի է, ոչ արարած, այլ համապատիւ, և արարչակից նմին:

Ատուգեա և դու, ով հողէմարտ, զի ուր Որդի և Հայր զուգապատիւք ցուցանին իրերաց վկայութեամբ՝ անդ և Հոգւոյն իջումն, և միութիւն Երրորդութեանն: Իսկ դու, ով նկատոր, մի թէ ձայնին Յովհաննու ասէր ահա պառն Աստուծոյ որ բառնայ զմեղե աշխարհի, զորդւոյ մարդկարար կիրան տեսանելով, քան զհայր և զհոգի ցածագո՞յն ինչ համարեցիս, մի դառինն անուամբ՝ և նուաստագունիւք կրիւք զբարձրագոյն աղաւաղէս, հայեաց ի բանս հրէիցն, և յանդումն նոցա. ոչ ապաքէն ասեն, դա է որդին Յովսեփա որ ի Մարիամայ, և զարձեալ՝ եթէ մարդ է և զանձն որդի Աստուծոյ առնէ, և թէ հայհոյեաց, զի զինքն որդի Աստուծոյ ասաց, և զարձեալ թէ վասն բարւոյ զործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ, այլ վասն հայհոյութեան, զի մարդ ես և զանձն քո Աստուած առնես: Եւ այս ինչ, և բազում իւրիք զայթաղէին ի նա:

Տես արդ, զի զոր Կարապետն ի տեսանելն զառնն Աստուծոյ ասաց, Հայր ձայնին որ ի վերուստ, որդի ինքեան դաւանեաց, զի թէ այդպէս ոչ էր ըզմեղս աշխարհի ո՞րպէս արդեօք բառնայր, դա է ասէ Որդի իմ սիրելի, դա է ասէ և ոչ զոքա, որով իմացաք ի ձեռն ձայնին և իջման Հոգւոյն ճշմարտութեան, զայս զով որդի Աստուծոյ, դայ է Որդի իմ սիրելի, և որ յերկրի որդի իմ զդա ոչ խոստովանեցի, յերկինս զիս ուրանայ:

Արդ եթէ զկնի այսմ վասն վարելոյն յանապատ և պահելոյն և փորձանացն, որ ի սատանայէ, յերկուանայցէ ոք, Պօղոս հաւատարմացուցանէ, պատմելով յաղապս զօտեմարտելոյն ընդ սատանայի: Եթէ որ անհնարին էր օրինացն, որով տկարանայր մարմնով, Աստուած զորդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց, և զատապարտեաց զմեղս մարմնով իւրով. վասն զի յետ մկրտութեանն զօտեմարտեցաւ զարձեալ ընդ սատանայ՝ նոր զօտեմարտութիւն, ո՞ւր, յանապատին, և ո՞ ասէ, աւետարանիչն Մատթէոս. Յայնժամ ասէ վարեցաւ Յիսուս ի հոգւոյն յանապատն առ ի փորձել ի սատանայէ: Եւ այս

ն^ր պէս արդեք, լուր մինչ մկրտիւր ի Յովհաննու մերձ եկն և նա, առ ի ստուգել հաւաստի՝ թէ յի^րնչ աւարտեացի ասպախարութեան քարոյն Յովհաննու կամ մկրտութիւն նորա:

Ուր ի հայրական ձայնէն, որպէս նեախ իմն հարեալ, ընկճեցաւ նա, ջրեալ խորտակեցաւ մկրտութեամբն Տեառն և զօրութիւն նորա, վասն զի մեղացն որ զօրութիւն էր նորա, ջուրքն Յորդանանու մեռելութիւն ետես նա, և հին մարդոյն, որ ապականեալ էր մեղօք, մկրտութեամբն Տեառն և զաւստեամբ Հոգւոյն՝ քան դառաջինն առաւել պարզեցաւ փառս և անմահութեան նորոգումն. այսմ ամենայնի հանդիպելով անրաւ տրտմութեամբ տարակուսելով ինչէր, առաւել ևս վասն այնր, զի զոր մկրտեցաւ ի մարդկան աշս քան զոր մկրտեաց խոնարհագոյն տեսանէր:

Եւ դարձեալ զձայնն Հօր, և զՂըւմն Հոգւոյն յաղաղս նորա ստուգէր, որով ցնորէր, անրաւ խոտովութեամբ վարանեալ լինէր, մերձ կալ և պատերազմել երկնէր, վասն զի զորդիութեան ձայնն լուեալ էր, և հեռանալ և տեղի տալ ոչ կամէր, վասն զի մարդ տեսանէր:

Այսպիսի խորհրդիւ ցնորելով, յորժամ վարեցաւ Յիսուս յանապատն ի Հոգւոյն՝ ընթացաւ զկնի և նա. էր յանապատին Քրիստոս, էր անդ և ստտանայ, որոյ մերձ լինելով ասէր. Որպիսի^ր ոք է սա, մարդ է, ահա և Աստուած երևիւր, եթէ Աստուած է՝ ընդէ^ր ունի աշս, ձեռս, ոտս, բերան. որ և ի դայն ի մկրտութիւն, մերկացաւ մարմնով, որպէս զայր մի, բայց այն ամենայն դարհուրեցուցանեն զիս. Գարբիէլի աւետիքն, կոչիլն որդի բարձրելոյն, հրեշտակացն առ Հովիտն ձայնեալ, մոգուցն երկրպագութիւնն, զոր Յովհաննէս ասէր, թէ ոչ եմ արժանի լուծանել զխրացս կոչկաց նորա, և թէ՛ Ահա դառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի, և ինձ պարտ է ի քէն մկրտիլ, և դու առ ի^րս գաս:

Մարդ ոք զիս^ր զկարէ բառնալ զմեզս միոյն, թող թէ զամենայն աշխարհի. ուրեմն Աստուած է: Եւ զիս^ր զապա մարմին ունի, մարդ է. և ընդէ^ր արդեք Հայր ի վերուստ ասէ. Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ: Զի^րնչ արդեք արարից, եթէ մարտեայց երկնէլիմ, գուցէ Աստուած է, և յաղթեացէ. և թէ ոչ մարտեայց՝ կասկածիմ, թերևս մարդ է, և ես ի մարդոյ արհամարհեցայ: Զի^րնչ զորճեցից արդեք, ձայնն Հօր զսա Աստուած քարոզէ, և կերպարանն՝ մարդոյ ցուցանէ: Եւ զինչ ապա Քրիստոս, որ քննէ զսիրտս և զերիկամունս, և իմանայ զխորս ամ. և զժածուկս: Գիտաց զխորհուրդս նորա, զի վասն ստուգելոյ մարդկութեանն էր, առ ի պատերազմիլ համարձակ:

Ակաւ ապա ի պահել և զաւուրս տասն ոչ եկեր: Անցին և աւուրք երեսուն, պահեաց և զքառասուն տիւ և զքառասուն զիշեր, ոչ ապաքէն զՄովսիսին կատարեաց: Արդ զիտելով տեսից աստուատ՝ եթէ ի վեր անցանէ քան ըզքառասնից թիւսն, ապա ոչ է մարդ: Եւ վասն այնր ոչ անց զչափ քառասնիցն Քրիստոս, զի մի փախիցէ սատանայ:

Հրատ. Ա. Յ. ՍՐՃՈՒՆԻ

(Շար. 8)